Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2016 թվականի փետրվարի « 11 »-ի N 25 -Ն հրամանի

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
# ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Ջերմուկի համայնքապետարանի Ջերմուկի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն ձևավորված համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգը:

2. Խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Ջերմուկի համայնքապետի՝ որոշման մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմերի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժինը (այսուհետ՝ տարածքային մարմին) հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Խորհրդի անդամներին:

3. Խորհրդի առաջին նիստը հրավիրում և վարում է տարածքային մարմնի ղեկավարը:

4. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կազմը հաստատվելուց հետո հրավիրված առաջին նիստում, Խորհրդի անդամների թվից՝ բաց քվեարկությամբ, Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով, բայց ոչ ավելի խորհրդի տվյալ անհատական կազմով գործելու ժամկետի ավարտը:

5. Խորհրդի նախագահի ժամկետից շուտ վերընտրություն հնարավոր է՝

1) Խորհրդի նախագահի հրաժարականի դեպքում.

2) Խորհրդի անդամների երկու երրորդի կողմից Խորհրդի նախագահի հրաժարականի գրավոր պահանջի դեպքում:

6. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

7. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Համաձայնագրին, սույն աշխատակարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

8. Խորհրդի նիստերի անցկացման և (կամ) աշխատանքների իրականացման վայրը տարածքային մարմնի գտնվելու վայրն է:

## II.ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Իր իրավասության շրջանակներում Խորհուրդը՝

1) քննարկում և ուսումնասիրում է սոցիալական աջակցություն հայցող անձանց ներկայացրած դիմումները, փաստաթղթերը և կողմնորոշում նրանց սոցիալական աջակցություն ստանալու հարցում.

2) իր անդամների (նրանց ներկայացրած կազմակերպությունների) ուժերով կազմակերպում է տնային այցելություն և տալիս առաջարկություն՝ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում և կարգով՝ նպատակ ունենալով մեծացնել կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան և սոցիալական նպաստներ, հրատապ օգնություն) հասցեականությունն ու համակարգի թափանցիկությունը.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N145-Ն որոշման NN3, 8 և 12, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1069-Ն որոշման N2 հավելվածներով Խորհրդին վերապահված լիազորությունները.

4) ստեղծում է համապատասխան աշխատանքային խմբեր՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության դեպքում.

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Համաձայնագրով սահմանված այլ լիազորություններ:

## III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Խորհուրդն աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը գումարվում են նաև Խորհրդի նախագահի կամ տարածքային մարմնի ղեկավարի նախաձեռնությամբ:

11. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

12. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Խորհրդի նախագահը, Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ Խորհրդի նախագահի հանձնարարականով՝ Խորհրդի անդամներից մեկը (իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային մարմնի ղեկավարը):

13. Խորհրդի նիստի անցկացման վայրը տարածքային մարմնի գտնվելու վայրն է: Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կարող են գումարվել նաև արտագնա նիստեր: Խորհրդի նախագահը որոշում է Խորհրդի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

14. Խորհրդի նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել շահագրգիռ անձինք կամ նրանց օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև Համաձայնագրի այլ կողմերի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

15. Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում և վարում է Խորհրդի նիստերը,

2) ստորագրում է Խորհրդի որոշումները, այլ փաստաթղթերը (քաղվածքներ, արձանագրություններ, առաջարկություններ և այլն),

3) իրականացնում է սույն աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

16. Տարածքային մարմինն ապահովում է Խորհրդի աշխատանքների կազմակերպական և գործավարական սպասարկումը՝

1) կազմում է Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը Խորհրդի անդամների և իր, ինչպես նաև Համաձայնագրին միացած այլ կողմերի ներկայացրած առաջարկությունների հիման վրա.

2) նիստի օրակարգի նախագիծը Խորհրդի անդամներին է ուղարկվում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ.

3) արձանագրում է նիստը և արձանագրությունը ներկայացնում ստորագրման Խորհրդի նիստի բոլոր մասնակիցներին՝ ավարտից հետո մեկօրյա ժամկետում:

17. Խորհրդի նիստի օրակարգում նշվում են՝

1) Խորհրդի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը,

2) քննարկվող յուրաքանչյուր հարցը, զեկուցողի անունը, ազգանունը,

3) Խորհրդի նիստին հրավիրված անձանց անունները, ազգանունները, զբաղեցրած պաշտոնները (իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումները):

18. Խորհրդի նիստն անցկացվում է հաստատված օրակարգով:

19. Խորհուրդը նիստերի ընթացքում որոշումները կայացնում է բաց քվեարկության միջոցով, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը կայացվում է հօգուտ սոցիալական աջակցություն հայցող անձի:

20. Որոշմանը դեմ քվեարկած Խորհրդի անդամը կարող է հատուկ կարծիք ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) և (կամ) տարածքային մարմնին և (կամ) Հայաստանի Հանրապետության Ջերմուկի համայնքապետին:

21. Տարածքային մարմնի համապատասխան աշխատողը Խորհրդի նիստում կայացրած որոշումները, ինչպես նաև այլ փաստաթղթերը (արձանագրություններ, քաղվածքներ, կարծիքներ և այլն) դրանք ստորագրվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում (ուղարկում) է տարածքային մարմնի ղեկավարին և (կամ) այլ համապատասխան կազմակերպություններին ու պաշտոնատար անձանց:

22. Խորհրդի կայացրած որոշումները տարածքային մարմնի կողմից չկատարման (առաջարկությունները չբավարարվելու) դեպքում Խորհուրդը կարող է այդ մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Ջերմուկի համայնքապետին և (կամ) նախարարությանը:

23. Խորհուրդն իրականացրած գործունեության մասին կիսամյակը մեկ անգամ ամփոփ տեղեկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության Ջերմուկ քաղաքի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգով նախատեսված մարզային զարգացման հանձնաժողովին, ինչպես նաև նախարարությանը:

01.02.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2018թ. N 38-Ա

## ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՑԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25 -Ն հրամանով **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի՝ սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց, համագործակցության լիարժեք կայացումը, հետագա զարգացումն ու գործընկերային հարաբերությունների ձևավորումը խթանելու նպատակով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժնի կողմից իր սպասարկման տարածքում գործող՝ սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումների և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական պաշտպանության ոլորտում գործող պետական և համայնքային, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների ներկայացուցիչներից, ինչպես նաև ֆիզիկական անձանցից Համակարգող խորհրդի կազմում ընդգրկել՝

1.Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ

Ջերմուկ համայնք, Մյասնիկյան 8, Կայք՝ jermukmunicipality.am.հեռ.՝ 028721217

Ներկայացուցիչ՝ Գոհար Թաղևոսյան

2.ՀՀ Վայոց ձորի Ջերմուկի համայքնապետարանի աշխատակազմ

Ջերմուկ համայնք, Մյասնիկյան 8, Կայք՝ jermukmunicipality.am, հեռ.՝ 028721217

Ներկայացուցիչ՝ Սամվել Մարգարյան

3.ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության Ջերմուկի ՍԱՏԲ

Ջերմուկ համայնք, Ձախափնյակ2/3, հեռ.՝ 028721063, Կայք ՝www.social.am

Ներկայացուցիչ՝ Արմեն Դանիելյան

4 ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալության Ջերմուկի զբաղվածության տարածքային կենտրոն

Ջերմուկ համայնք, Ձախափնյակ 2/3 ,հեռ. 028721375

Ներկայացուցիչ՝ Արմեն Գրիգորյան

5.ՀՀ Վայոց ձորի մարզի «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ

Ջերմուկ համայնք, Մաշտոցի 4փակ 3/3 հեռ. 028721241 էլ փոստ՝ jermukiak@mail.ru

Ներկայացուցիչ՝ Մանուշակ Նալբանդյան

6. Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Արվեստի հ 2 դպրոց ՀՈԱԿ

Ջերմուկ համայնք Ձախափնյակ ,հեռ 098178071 էլ.փոստ՝ xachikenokyan@mail.ru

Ներկայացուցիչ՝ Խաչիկ Ենոքյան

7. ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի Ջերմուկի ՍԱՏԲ

Ջերմուկ համայնք Ձախափնյակի թիվ 2 մանկապարտեզի մասնաշենք , հեռ. 028723946, էլ փոստ՝ nersisyan-57@mail.ru

Ներկայացուցիչ՝Ազատուհի Ներսիսյան

8. Ջերմուկ համայնք, Մյասնիկյան 8, հեռ. 028721217, էլ. փոստ՝info@jermukcity.am

Ներկայացուցիչ՝ Սեդրակ Ասատրյան

9.Վայոց ձորի մարզային բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով

Ք.Եղեգնաձոր Վայքի 1 հեռ.028122465, Կայք՝ vayotsdzor.bsph@hhbsp.am

Ներկայացուցիչ ՝ Համլիկ Մխիթարյան

10. Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ

Ք. Երևան Էրեբունի թաղ. Խաղաղ Դոնի 27/121 էլ. փոստ՝ lusiks1965@mail.ru հեռ. 094040549 ,Լուսիկ Սաղաթելյան

11. «Ջերմուկի կրթահամալիր» ՊՈԱԿ

ներկայացուցիչ՝ Մարո Մարգարյան, ք. Ջերմուկ, Շահումյան 1/47,
էլ. փոստ՝ maro.margaryan@mail.ru, հեռ. 093404525:

2. «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածին համապատասխան ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 26-ի N 53-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　　ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 մարտի 15
Ջերմուկ

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՑԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Համաձայնագրին միանալու ամսաթիվը | Կազմակերպության վերաբերյալ տվյալներ /հասցեն, հեռ., իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման օրը, ամիսը, տարին, գրանցման համարը, էլեկտրոնային փոստի հասցեն, կայքի անվանումը/, Ֆիզիկական անձանց դեպքում –ազգանունը, անունը, հաշվառման հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռ. | Համակարգող խորհրդի կազմում ընդգրկված լինելը **այո/ոչ** |
|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ | 24.05.2016թ. | Մարգարյան Սամվել<br>Ք. Ջերմուկ մյասնիկյան 8<br>հեռ. 0287 2-12-17<br>21.04.2004 20.180.00374<br>Jermukmunicipality.gov.am | այո |
| 2. | ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ | 24.05.2016թ. | Թաղևոսյան Գոհար<br>Ք. Ջերմուկ մյասնիկյան 8<br>հեռ. 0287 2-12-17<br>21.04.2004 20.180.00374<br>Jermukmunicipality.gov.am | այո |
| 3. | Ջերմուկի սոցիալական ապահովության տարածքային բաժին | 24.05.2016թ. | Դանիելյան Արմեն<br>Ք. Ջերմուկ Ձախափնյակ 2/3<br>հեռ. 0287 2-10-55<br>01.02.2008 286.180.06766<br>www. Social.am | այո |
| 4. | «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ | 24.05.2016թ. | Նալբանդյան Մանուշակ<br>Ք. Ջերմուկ Մաշտոցի 4 փակ 3/3<br>հեռ. 0287 2-12-41<br>17.01.1997 20.140.00147<br>jermukiak@mail.ru | այո |
| 5. | ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ | 07.08.2017թ. | Ասատրյան Մեղրակ<br>Ք. Ջերմուկ մյասնիկյան 8<br>հեռ. 0287 2-12-17 | այո |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | 21.04.2004 20.180.00374<br>Jermukmunicipality.gov.am | |
| 6. | Վայոց ձորի մարզի ԲՍՓՀ | 24.05.2016թ. | Մխիթարյան Հասմիկ<br>ՎՁՄ Ք. Եղեգնաձոր Վայքի 1/1<br>հեռ. 0281 2-24-65<br>Vayotsdzor.bsph@hhbsp.am | այո |
| 7. | Ջերմուկի զբաղվածության տարածքային կենտրոն | 24.05.2016թ. | Գրիգորյան Արմեն<br>Ք. Ջերմուկ Ջախափնյակ 2/3<br>հեռ 0287 2-13-75<br>29.05.1997 20.0073<br>http.www.emploment.am | այո |
| 8. | Ջերմուկի քաղաքացիական կացության ակտերի տարածքային բաժին | 01.07.2016թ. | Սաղաթելյան Լուսիկ<br>Ք. Երևան Էրեբունի թաղ. Խաղաղ Դոնի 27/121<br>lusiks1965@mail.ru<br>բջջ. 098174571 | այո |
| 9. | Ջերմուկի ՍԱՏԲ | 24.05.2016թ. | Ներսիսյան Ազատուհի<br>Ք. Ջերմուկ Մյասնիկյան 24/30<br>nersisyan-57@mail.ru<br>բջջ.094040545 | այո |
| 10. | Ջերմուկի կրթահամալիր | 01.07.2016 | Մարգարյան Մարո<br>Ք. Ջերմուկ Շահումյան 1/47<br>maro.margaryan@mail.ru<br>բջջ. 093404525 | այո |
| 11. | Ջերմուկի արվեստի թիվ 2 դպրոց | 24.05.2016թ. | Ենոքյան Խաչիկ<br>Ք. Ջերմուկ Ջախափնյակ 23ա/15<br>xachikenokyan@mail.ru<br>բջջ. 098994452 | այո |
| 12. | | | | |
| 13. | | | | |
| 14 | | | | |
| 15. | | | | |